ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«01» սեպտեմբերի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի աշակերտներ, ուսանողներ, կրթության և գիտության ոլորտի ներկայացուցիչներ, ծնողներ

Այսօր Գիտելիքի, գրի և դպրության օրն է:

Արագորեն զարգացող աշխարհում միայն գիտելիքի ու հմտությունների զգալի պաշարով է հնարավոր հասնել առաջընթացի, ուստի բաց մի թողեք ձեզ տրված այդ հնարավորությունը, եղեք նպատակասլաց, սովորեք, նվաճեք մասնագիտական բարձունքներ, գիտելիքներով զինված՝ եղեք բանիմաց և առաջնորդող:

Շնորհավորում եմ բոլորիդ Գիտելիքի օրվա և 2024-25 ուստարվա մեկնարկի առթիվ:

Նոր ուսումնական տարին թող լինի առավել հագեցած և արդյունավետ, քանզի որակյալ կրթությունը մեր ժողովրդի կյանքում միշտ է եղել գերակա նպատակ:

Այս օրը կարևոր է հատկապես առաջին անգամ դպրոց հաճախող աշակերտների համար: Նրանց մաղթում եմ լուսավոր ճանապարհ և բարձր առաջադիմություն, իսկ մանկավարժներին, ում վստահված է սերունդների կրթության և դաստիարակության դժվարին գործը, հաջողություններ իրենց շնորհակալ աշխատանքում:

Մաղթում եմ, որ այս ուսումնական տարին լինի բացահայտումների, ստեղծագործական մտքի սլացքի ու գիտության նորանոր բարձունքների նվաճման տարի:

Բարի երթ բոլորիդ և հաջողություններ 2024-2025 ուսումնական տարում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**